

լով անոր տեղ հաստատէ Ապպասեան խալիֆային անունը . Սալահէտտին չուզեց անմիջապէս այս յանդուզն ձեռնարկը ընել . իր զօրապետներուն խորհուրդին ենթարկեց զայն , և անոնք թեր ուզէմ խօսքերէ յետոյ որոշեցին համակերպիլ Նուրէտտինի հրամանին : 1171ին Ապպասեան սուլթանին անունը յիշատակուեցաւ ուրբաթի ազօթքի ժամանակ . ասիկա յեզափոխութիւն մ'էր . սակայն ժողովուրդը՝ հակառակ մտավախութեանց , կատարեալ անտարբերութեամբ ընդունեցաւ այս որոշումը : Փաթիմեան սուլթանը անտեղեակ էր այս իրադարձութեանց . ան հիւանդ , եւ փակուած էր պալատին սենեակներէն միոյն մէջ . ոչ մէկը անոր տեղեկութիւն տուաւ եղած փոփոխութեան և իր գահընկեցութեան մասին . և խալիֆան քիչ ժամանակէն մեռաւ : Փաթիմեանց հարստութիւնը Եգիպտոսի մէջ տւեալ էր 207 տարի : 1174ին ալ Նուրէտտին կը վախճանէր Դամասկոսի մէջ և անոր կը յաջորդէր իր որդին Էլ-Մէլէք-էս-Սալիհ Իսմայէլ , և Սալահէտտին զերծ մնալով Նուրէտտինի համար տաժած մտավախութիւններէն , պատեհ առիթի մը կ'սպասէր իր նպատակը իրականացնելու : Նուրէտտինի մահուամբ էմիրները խլրտեցան և սկսան ուրոյն ուրոյն տիրապետել . այդ պատճառաւ տկարացաւ Աթապէկին պետական կազմը և Սալահէտտին զիւրութեամբ տիրապետեց Սիւրիոյ և միացուց զանիկա Եգիպտոսի և ինքզինք սուլթան հռչակեց 1175ին (Sleu Huart, Histoire des Arabes, Հատ. Բ. էջ 14-24) :

Քաղաքական այս բոլոր իրադարձութեանց ժամանակ շիիսները պարապ չմնացին . առաջին առթիւ , Փաթիմեան կուսակիցները գաղտնի ընկերութիւններով կազմակերպուեցան և հանգուցեալ խալիֆային իրը յաջորդ ընտրեցին Եէմէնի գիտնական Օմարան . բայց վերջինս զգալով Սալահէտտինի զօրաւոր դիրքը կամովին հրաժարեցաւ առաջարկուած պատիւէն :

Սալահէտտին պայքարելու համար քարոզութեան մը դէմ՝ որ երկու դարէ ի վեր կը պաշտպանէր պետական բոլոր ոյժերը , որոշեց գործադրել միևնոյն գրութիւնը , որ է Սիւննի վարդապետութիւնները ժողովրդականացնել : Շաֆէական ծէսերու համար Հին-Գահիրէի մէջ իմամ Շաֆէի գերեզմանին մօտ հիմնեց վարժարան մը , և միսթիք տէրվիչներ բերել տուաւ , որոնց բնակութեան համար շինեց խանիսն մը :